ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՆԵՐՍԵՍ ՄԻՍԱԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՄԻՆՉԵՎ 09.04.2018 Թ. ԳՈՐԾՈՂ «ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 54-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով Ներսես Միսակյանի դիմումի հիման վրա՝ մինչև 09.04.2018 թ. գործող «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Ներսես Միսակյանը դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2020 թվականի ապրիլի 27-ին)՝ խնդրելով դիմումն ընդունել քննության և «... և մինչև 09.04.2018 թվականը գործող և իմ նկատմամբ կիրառված «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասը՝ հաշվի առնելով նաև դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 57-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

2. Դիմողը, վկայակոչելով իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ (ՍԴՈ–630, ՍԴՈ–1142), շեշտադրել է, որ այս սկզբունքն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն

կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում:

Դիմողը, վերլուծելով Սահմանադրության 57-րդ և 79-րդ հոդվածներով ամրագրված իրավունքների բովանդակությունը, կարծում է, որ աշխատանքի ազատ ընտրության իրավունքը հիմնական իրավունք է, և եթե անձը որևէ աշխատանք է կատարում, ապա արգելվում է այդ աշխատանքից անհիմն ազատել: «Սա չի նշանակում, որ անձին հնարավոր չէ առհասարակ աշխատանքից ազատել, սակայն դա կարող է տեղի ունենալ, այսինքն՝ աշխատանքի ազատ ընտրության իրավունքը հնարավոր է սահմանափակել օրենքով սահմանված դեպքերում: Իսկ նման օրենքը պետք է սահմանի աշխատանքի ազատ ընտրության իրավունքի սահմանափակման հիմքերը և ծավալը, լինի բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքի կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթը, ամրագրելով երեք տարին մեկ ատեստավորում անցնելու պահանջ, հստակ և կանխատեսելի կերպով չի ամրագրել այդ ժամկետի հաշվարկման կանոնները՝ հնարավորություն տալով վարչական մարմնին, իսկ, այնուհետև՝ դատարաններին կամայական մեկնաբանությունների միջոցով շատ լայն բովանդակություն տալ երեք տարի ժամկետին և կամայական կերպով փաստացի դատախազի արտահերթ ատեստավորումն անցկացնել այն պարագայում, երբ դատախազի արտահերթ ատեստավորումն անցկացվում է գլխավոր դատախազի հրամանի հիման վրա կամ դատախազի ցանկությամբ:

Ըստ դիմողի՝ օրենսդրի տրամաբանությունից ելնելով՝ ստացվում է, որ դատախազության համակարգում ատեստավորման տեսանկյունից երկու տեսակ պաշտոններ կան՝ ատեստավորման ենթակա և ատեստավորման ոչ ենթակա: Ատեստավորման ենթակա պաշտոն զբաղեցնող դատախազը պարտավոր է երեք տարին մեկ անցնել ատեստավորում, այլ ոչ թե տարին մեկ, կամ երկու տարին մեկ, այլ երեք

տարին մեկ՝ բացառությամբ արտահերթ ատեստավորման դեպքի: Ժամանակային առումը շատ կարևոր է այն տեսանկյունից, որ ժամանակի ընթացքում դատախազության ծառայողների մասնագիտական գիտելիքները և աշխատանքային ունակությունները ենթարկվում են փոփոխությունների: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ատեստավորման ոչ ենթակա պաշտոն զբաղեցնելիս մասնագիտական գիտելիքները և աշխատանքային ունակություններն ստուգելու անհրաժեշտություն օրենսդիրը չի տեսնում, և ատեստավորման ոչ ենթակա պաշտոնից ատեստավորման ենթակա պաշտոնի նշանակելիս արդեն ենթադրվում է, որ դատախազության ծառայողների մասնագիտական գիտելիքները և աշխատանքային ունակությունները համապատասխանում են զբաղեցրած պաշտոնին, իսկ հաջորդ հերթական ստուգումը կարող է տեղի ունենալ երեք տարի հետո:

Դիմողի պնդմամբ՝ իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող նորմին տրված մեկնաբանությամբ ստացվում է, որ թեև անձը նշանակվել է ատեստավորման ենթակա պաշտոնի, սակայն դա նշանակություն չունի, այդ նշանակմամբ չի փաստվում դատախազության ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին, իսկ երեք տարի ժամկետը պետք է դիտարկել որպես դատախազության ծառայողների կյանքի ընթացքում ատեստավորման ենթակա պաշտոններ զբաղեցնելու ժամանակահատվածի հանրագումար, ինչն ուղղակի ոչ այլ ինչ է, քան կամայական մոտեցում աշխատանքի ազատ ընտրության իրավունքի սահմանափակման հիմքերի և ծավալի նկատմամբ, նման մեկնաբանությամբ վիճարկվող դրույթը դադարում է լինել բավարար չափով որոշակի, որպեսզի անձը ի վիճակի լինի դրսևորելու համապատասխան վարքագիծ:

3. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանը

գտնում է, որ սույն դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրական դատարանում դատական պաշտպանության իրավունքն անձն իրացնում է Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված կարգով՝ ելնելով նաև Սահմանադրական դատարանում գործերի քննության, ինչպես նաև լուծման առանձնահատկություններից: Միաժամանակ, դատական (այդ թվում՝ սահմանադրական) պաշտպանության իրավունքը, ինչպես նաև դրա իրացման՝ օրենքով նախատեսված ընթացակարգային կանոնները ինքնանպատակ չեն և հայեցողաբար մեկնաբանվել չեն կարող, քանզի դրանց իրացումը ենթադրում է կոնկրետ իրավական (Սահմանադրությամբ և Օրենքով նախատեսված) գործընթացներ, ինչը պայմանավորված է դրանց մասնակից սուբյեկտների փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով: Հետևաբար, դիմողը Սահմանադրական դատարանում պարտավորված է կատարելու այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված են Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Սահմանադրական նշյալ նորմի հիման վրա «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով մանրամասնվում և կանոնակարգվում են անհատական դիմումին ներկայացվող սահմանադրական և օրենսդրական պահանջները: Դրանց սահմանումն ինքնանպատակ չէ և միտված է Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդա-

ռադատություն իրականացնելու իր գործառույթի պատշաճ և արդյունավետ իրացման ապահովմանը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը վերարտադրում է Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի նորմատիվ պահանջը: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում: Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը, իսկ նշված 3-րդ մասի համաձայն՝ «Անհատական դիմումները կարող է Սահմանադրական դատարան ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝ վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո»:

Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ վերջնական դատական ակտը՝ Վճռաբեկ դատարանի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը, կայացվել է 2019 թվականի սեպտեմբերի 25-ին, իսկ Ներսես Միսակյանի դիմումը փոստային ծառայությանն է հանձնվել 2020 թվականի ապրիլի 6-ին: Հետևաբար՝ դիմողը բաց է թողել Սահմանադրական դատարան դիմելու համար սահմանված վեցամսյա ժամկետը, ինչը հիմք է անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժելու համար:

Ինչ վերաբերում է Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու վերաբերյալ դիմողի միջնորդությանը, ըստ որի խնդրո առարկա գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանի որոշումը վերջինս ստացել է 2019 թվականի հոկտեմբերի 16-ին, ապա Սահմա-

նադրական դատարանը փաստում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը նախատեսում է վեցամսյա ժամկետը հաշվարկել դատական ակտի հրապարակման պահից և չի նախատեսում դատական ակտն ավելի ուշ ստանալու փաստով, կամ այլ հանգամանքներով դատավարական ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու և վերականգնելու հնարավորություն:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Ներսես Միսակյանի դիմումի հիման վրա՝ մինչև 09.04.2018 թ. գործող «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

19 մայիսի 2020 թվականի
ՍԴԱՈ-108